ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

**Հավելված N 1**
**Հայաստանի Հանրապետության**
**պետական եկամուտների կոմիտեի**
**նախագահի 2020 թվականի**
**մայիսի 27-ի N 477-Ն հրամանի**

**Օրինակելի ձև**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գործադիր մարմնի կողմից
10.05.2023 թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

***«ՀԱՅԱՍՏԱՆ» ՄԱՐԶԱԿԱՆ***

հասարակական կազմակերպության 2022 թ. գործունեության մասին

| | | |
|---|---|---|
| **1. Հասարակական կազմակերպության՝** | | |
| 1.1 Լրիվ անվանումը | | «ՀԱՅԱՍՏԱՆ» ՄԱՐԶԱԿԱՆ |
| 1.2 ՀՎՀՀ-ն | | 00404508 |
| 1.3 Գտնվելու վայրը | | ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ 6 |
| 1.4 Պետական գրանցման համարը | | 211.171.00748 |
| 1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը | | 2002-04-09 |
| 1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային) | | +(374)77563166 |
| 1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը | | www.hayastanmhk.am |
| 1.8 Էլեկտրոնային փոստը | | hayastanssf@gmail.com |
| 2 Գործադիր մարմնի ղեկավարի՝ | | |
| Անունը<br>ՍՈԿՐԱՏ | Ազգանունը<br>ՊԵՏՐՈՍՅԱՆ | Պաշտոնը<br>Նախագահ |
| 3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը | | |
| 1. միավորել մարզական նախասիրություններ ունեցող ՀՀ և օտարերկրյա քաղաքացիներին | | |
| 2.ֆիզիկական կուլտուրայի միջոցներով մասնակցել երկրի ազգաբնակչության առողջության պահպանման ու ամրապնդման.ֆիզիկական և բարոյական դաստիարակության գործընթացինկ | | |
| 3. իրականացնել ՀՀ-ում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման պետական հայեցակարգային ծրագրեր | | |
| 4.կազմակերպության անդամների և Հայաստանի գործող և նախկին մարզիկների և սպորտի բնագավառում աշխատող անձանց սոցիալական աջակցություն | | |
| 5. տնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը:Կազմակերպությունը կարող է իրականացնել օրենքով չարգելված ցանկացած տնտեսական գործունեություն: | | |
| 6. կազմակերպության գործունեության առարկան է՝ կազմակերպել և սատարել այնպիսի ծրագրերի իրագործմանը, որոնք ուղղված են նպաստելու ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը | | |
| 7. կազմակերպել ֆիզկուլտուրային-մարզական, առողջարարական և օլիմպիական շարժման լայն քարոզչություն | | |
| 8. անցկացնել ֆիզիկական պատրաստականության և մարզական աշխատանքի ստուգատես-մրցույթներ, կազմակերպել մարզական տոներ, փառատոններ, առաջնություններ, մրցաշարեր և այլ զանգվածային միջոցառումներ | | |
| 9. իրականացնել աշխարհի ու եվրոպայի առաջնությունների և օլիմպիական խաղերին ՀՀ ազգայինն հավաքական թիմերը բարձրակարգ մարզիկներով համալրելու պետական ծրագրեր | | |
| 10. պատրաստել հասարակական հրահանգիչներ, մրցավարներ՝ բարձրացնել նրանց որակավարումը | | |
| 11. մշտական քարոզչություն վարել ֆիզիկական կուլտուրան և սպորտը որպես ազգաբնակչության առողջ ապրելակերպի ձևավորման անփոխարինելի միձոց | | |
| 12. նպատակների իրականացման համար կազմակերպությունը համագործակցում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ազգային օլիմպիական կոմիտեի, մարզական ֆեդերացիաների և այլ կազմակերպությունների հետ | | |
| 13. կազմակերպության կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ստացված շահույթը օգտագործվում է միայն սույն կանոնադրության նպատակների իրագործման ուղղությամբ | | |
| 14. կազմակերպությունը վարում է ձեռնարկատիրական գործունեության առանձնացված հաշվառում՝ դրա վերաբերյալ տեղեկությունները ներառելով օրենքով նախատեսված հաշվետվություններում | | |
| **4 Հասարակական կազմակերպության՝** | | |
| 4.1 Անդամների թիվը | | 220 |
| 4.2 Կամավորների թիվը | | |
| 5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը | | 3 |
| **6. Իրականացված ծրագրեր՝** | | |

| Հ/Հ | 6.1 Ծրագրի անվանումը | 6.2 Վայրը | 6.3 Նպատակը | 6.4 Կարգավիճակը |
|---|---|---|---|---|
| 1 | Արտադպրոցական դաստիարակություն | Ք. Երևան Ագաթանգեղոսի 6 | Մարզիկների պատրաստում և առաջնությունների անցկացում | Ավարտված |

**7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝**

| Հ/Հ | 7.1 Ծրագրի անվանումը | 7.2 Վայրը | 7.3 Կարգավիճակը | 7.4 Նպատակը | 7.5 Հիմնական արդյունքները |
|---|---|---|---|---|---|
| 1 | Արտադպրոցական դաստիարակություն | Ք. Երևան Ագաթանգեղոսի 6 | Ավարտված | Մարզիկների պատրաստում և առաջնությունների անցկացում | Բարձրակարգ մարզիկների պատրաստում |
| 2 | Արտադպրոցական դաստիարակություն | Ք. Գյումրի | Ավարտված | Մարզիկների պատրաստում և առաջնությունների անցկացում | Բարձրակարգ մարզիկների պատրաստում |
| 3 | Արտադպրոցական դաստիարակություն | Ք. Վանաձոր | Ավարտված | Մարզիկների պատրաստում և առաջնությունների անցկացում | Բարձրակարգ մարզիկների պատրաստում |

**8. Տարեկան մուտքեր՝**

| | |
|---|---|
| 8.1 Դրամական միջոցները | 469,939,127 |
| 8.2 Գույքը | |
| Ընդամենը | 469,939,127 |

**9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ**

| Հ/Հ | 9.1 Դրամական միջոցները | 9.3 Ստացման աղբյուրները |
|---|---|---|
| 1 | 309,809,500 | ՀՀ կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարություն |
| Հ/Հ | 9.2 Գույքը | |
| 1 | | |
| Ընդամենը | 309,809,500 | |

**10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը՝**

| | | |
|---|---|---|
| 10.1 Դրամական միջոցները | | 469,939,127 |
| 10.2 Գույքը | | |
| Հ/Հ | 10.2.1 Տեսակը | 10.2.2 Արժեքը |
| 1 | | |
| Ընդամենը | | 469,939,127 |

**11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝**

| | | |
|---|---|---|
| 11.1 Դրամական միջոցները | | 309,809,500 |
| 11.2 Գույքը | | |
| Հ/Հ | 11.2.1 Տեսակը | 11.2.2 Արժեքը |
| 1 | | |
| Ընդամենը | | 309,809,500 |

**12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝**

| Հ/Հ | 12.1 Տեսակը | 12.2 Ստացված շահույթը | 12.3 Շահույթի օգտագործումը |
|---|---|---|---|
| 1 | Տարածքի վարձակալություն | 10,203,200 | Կազմակերպել և սատարել այնպիսի ծրագրերի իրագործմանը, որոնք ուղղված են նպաստելու ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը |
| 2 | Ավանդի տոկոսներ | 4,000,000 | Իրականացնել ՀՀ-ում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման պետական հայեցակարգային ծրագրեր |
| 3 | Հիմնական միջոցի վաճառք | 140,000,000 | Կազմակերպել և սատարել այնպիսի ծրագրերի իրագործմանը, որոնք ուղղված են նպաստելու ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը |
| Ընդամենը | | 154,203,200 | |
| Նշումներ | | | |
| | | | |

Կից ներկայացվում է՝

Աուդիտորի եզրակացություն՝ ________4________ էջից

Էջերի քանակը

Գործադիր մարմնի ղեկավար ______________________

ստորագրություն, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ ______________________
ստորագրություն, անունը, ազգանուն

Digitally signed by PETROSYAN MARIAM 7701850325
Date: 2023.07.11 14:56:22 AMT

# «ՀԱՅԱՍՏԱՆ» ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

# ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար



ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց պողոտա 9/5, գրասենյակ 9, Հեռ.՝ +37411-577-544,
էլ.հասցե՝ auditservicellc@gmail.com, վեբ կայք՝ www.pkfarmenia.com

## ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ**

### ԿԱՐԾԻՔ

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՀԱՅԱՍՏԱՆ» ՄԱՐԶԱԿԱՆ հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀԿ)՝ 2022թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվությունը, որը ներառում է «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված հաշվետվության 7-րդ, 9-րդ և 11-րդ դաշտերում լրացված տվյալները:

Մեր կարծիքով, «ՀԱՅԱՍՏԱՆ» ՄԱՐԶԱԿԱՆ հասարակական կազմակերպության կից ներկայացված հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվությունը, որը ներառում է «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված հաշվետվության 7-րդ, 9-րդ և 11-րդ դաշտերում լրացված տվյալները, բոլոր էական առումներով ճշմարիտ է ներկայացնում 2022 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա մուտքերի և ստացման աղբյուրների, ինչպես նաև օգտագործված միջոցների պատկերը՝ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

### ԿԱՐԾԻՔԻ ՀԻՄՔԵՐ

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Անկախ ենք ՀԿ-ից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝այդ պահանջների համաձայն: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝մեր կարծիքն արտահայտելու համար:

### ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՂԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հասարակական կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվությունը, որը զերծ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումից:



ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց պողոտա 9/5, գրասենյակ 9, Հեռ.՝ +37411-577-544,
էլ.հասցե՝ auditservicellc@gmail.com, վեբ կայք՝ www.pkfarmenia.com

Հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվությունը պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է ՀԿ-ի անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու (եթե կիրառելի է), ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել ՀԿ-ն կամ դադարեցնել դրա գործունեությունը, կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության կազմման գործընթացը վերահսկելու համար:

## ԱՈՒԴԻՏՈՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏԻ ՀԱՄԱՐ

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝խարդախությունների կամ սխալների հետևանքով հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվության օգտագործողների՝ դրա հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ՝ ՀԿ-ի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:



ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց պողոտա 9/5, գրասենյակ 9, Հեռ.՝ +37411-577-544,
էլ.հասցե՝ auditservicellc@gmail.com, վեբ կայք՝ www.pkfarmenia.com

- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա՞ է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել ՀԿ-ի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ:

- Գնահատում ենք ընդհանուր առմամբ հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, և թե արդյո՞ք ֆինանսական հաշվետվությունը ներկայացնում է դրա հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

**Ք. Երևան- 10.05.2023թ.**

**ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ**

Գլխավոր տնօրեն՝ Գոռ Դավթյան

Որակավորված աուդիտոր Գայանե Թովմասյան



ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց պողոտա 9/5, գրասենյակ 9, Հեռ.՝ +37411-577-544,
էլ.հասցե՝ auditservicellc@gmail.com, վեբ կայք՝ www.pkfarmenia.com

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 11.07.2023 14:52